ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԷՄԻԼՅԱ ՌԱԴԻԿԻ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԼՈԳՈՊԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՌՈՒՂԻՆԵՐԸ

ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ռ.Ն.Ազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ Ա.Վ.Աբրահամյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լ.Հ.Սարատիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 18-ին, ժամը 12^{00}–ին, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 «Մանկավարժություն» մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի պող., 17 շենք:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մայիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ.Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայտնի է, որ երեխայի խոսքը շատ կարևոր է ուսումնական գործընթացում: Խոսքի խանգարումներն այս կամ այն չափով դժվարացնում են գիտելիքների յուրացումն ու խոսքային հաղորդակցումը և բացասաբար են ներգործում անձի ընդհանուր զարգացման ու կայացման վրա: Հետևապես, խոսքի խանգարումների հաղթահարումը առողջ հիմք է ապահովում երեխաների լիարժեք ուսուցման համար: Այդ է պատճառը, որ լոգոպեդական աշխատանքը դպրոցում ուսումնական ողջ գործընթացի կարևոր օղակներից է: Գիտամեթոդական գրականության տվյալները և մեր կողմից անցկացված ուսումնասիրությունները փաստում են, որ խոսքի խանգարում ունեցող աշակերտներն այսօր կազմում են տարրական դասարաններում սովորողների մեկ երրորդից ավելին, և այդ թիվը տարեց-տարի ավելանում է: Այդ պատճառով էլ հանրակրթական դպրոցում իրականացվող լոգոպեդական աշխատանքը մշտապես եղել է և այսօր էլ գտնվում է բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում (Օ.Տ.Մորոզ, 1973, Ա.Վ.Յաստրեբովա, 1983-1997, Garle Sjovoll, 1995, Յու.Վ. Ռիբցուն 2010, Ն.Գ.Դոլգիխ, 2011 և այլք): Նրանց կողմից իրականացված հետազոտությունների շնորհիվ օրեցօր կատարելագործվում են լոգոպեդական աշխատանքի մեթոդները, միջոցները և մանկավարժական պայմանները: Սակայն լոգոպեդական աշխատանքի դրվածքը Հայաստանի հանրակրթական դպրոցներում գրեթե ուսումնասիրված չէ: Այսպես, մի շարք հայ հեղինակներ (Գ.Ռ.Հովյան, 1994, Ժ.Հ.Պայլոզյան, 1996, Ա.Վ.Ավագյան, 2001, Ս.Գ.Կարապետյան, 2002, Ա.Գ.Գրիգորյան, 2013, Զ.Վ.Գրիգորյան, 2013) հետազոտել են խոսքի տարբեր խանգարումների հաղթահարման գործընթացին առնչվող բազմաթիվ հարցեր: Սակայն հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի դրվածքի վերաբերյալ գիտական վերլուծություններին անդրադարձ գրեթե չի եղել. վերլուծված չէ աշխատանքի արդի վիճակը, բացահայտված չեն առկա խնդիրները, վերլուծված չեն դրանց պատճառները, մշակված չեն աշխատանքի պլանավորման, իրականացման և հաշվետվության համընդհանուր լոգոպեդական փաստաթղթեր և այլն: Աշխատանքների իրականացման փորձարարականորեն մշակված միջոցների, մեթոդների, մանկավարժական պայմանների բացակայությունը զգալիորեն դժվարացնում է այս կարևոր հիմնախնդրի լուծումը: Ուստի Հայաստանի հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի դրվածքի գիտական վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտել առկա խնդիրները և մշակել այդ աշխատանքի օպտիմալացման ուղիներ: Շարադրվածով էլ հիմնավորված է սույն հետազոտության արդիականությունը, տեսական և գործնական կարևորությունը:

Հիմնախնդրի մշակվածության աստիճանը: Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի կազմակերպչական և բովանդակային հարցերին են նվիրված Օ.Տ.Մորոզի (1973), Ա.Վ.Յաստրեբովայի (1983-1997), Garle Sjovoll-ի (1995), Յու.Վ. Ռիբցունի (2010), Ն.Գ.Դոլգիխի (2011), Ե.Ա.Լիտվինովայի (2014) և այլոց մի շարք աշխատանքներ: Նշված և այլ աշխատություններում վերլուծված

են բազմաթիվ հարցեր՝ Ռուսաստանի, Խակասիայի, Ուկրաինայի, Բելուռուսիայի, Ղազախստանի, Նորվեգիայի և այլ երկրների հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի դրվածքի ուսումնասիրության, դրա կատարելագործման համար անհրաժեշտ մեթոդների, միջոցների, մակավարժական պայմանների փորձարարական մշակման վերաբերյալ՝ հաշվի առնելով երկրի կրթական համակարգի, ինչպես նաև մայրենի լեզվի առանձնահատկությունները: Գիտատեսական տվյալները վկայում են, որ հայ հեղինակների աշխատություններում վերլուծված են խոսքի տարբեր խանգարումների շտկման գործընթացին նվիրված հետազոտություններ: Սակայն Հայաստանի հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի դրվածքի վերլուծությանն ուղղված հետազոտություններ մինչ այժմ չեն արվել: Այդ հարցերի մշակումը և փորձարարական հիմնավորումը կնպաստի հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացմանը:

Հետազոտության օբյեկտն է՝ լոգոպեդական աշխատանքը հանրակրթական դպրոցում:

Հետազոտության առարկան է՝ հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման գործընթացը:

Հետազոտության վարկածը. հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի դրվածքի վերլուծությունը և այդ աշխատանքի օպտիմալացման համար մեր կողմից առաջարկվող ուղիների մշակումն ու փորձարարական հիմնավորումը կնպաստի լոգոպեդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության նպատակն է՝ մշակել հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման հիմնական ուղիները:

Նպատակը, օբյեկտը, առարկան և վարկածը որոշել են **հետազոտության հիմնական խնդիրները՝**

1. ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի դրվածքի կատարելագործման արդի մոտեցումները
2. ուսումնասիրել լոգոպեդական աշխատանքի դրվածքը հանրակրթական դպրոցներում
3. մշակել դպրոցում իրականացվող լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման համար անհրաժեշտ մեթոդներ, միջոցներ, մանկավարժական պայմաններ և փորձարարությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել հատուկ մանկավարժության մեջ և լոգոպեդիայում հաստատված հետևյալ գիտական տեսությունները, սկզբունքներն ու դրույթները.

- խոսքի խանգարումների հոգեբանամանկավարժական դասակարգում (Р.Е.Левина, 1961, Т.Б.Филичева, 1998)
- խոսքի խանգարումների վերլուծության սկզբունքներ՝ զարգացման, համակարգային մոտեցման և խոսքի խանգարումների կապը հոգեկան այլ գործընթացների հետ (Р.Е.Левина, 1968, В.А.Титов, 2014)

• դիսլեքսիայի բազմագործոնային մոդելի մասին կոնցեպցիա (А.Н.Корнев, 1995)

• դպրոցում լոգոպեդական աշխատանքի դրվածքի կատարելագործման տեսություններ (О.Т.Мороз, 1973, Garle Sjovoll, 1995, Ю.В.Рибцун, 2010, Н.К. Долгих, 2011, Е.А.Литвинова, 2014)

• աշակերտների բանավոր և գրավոր խոսքի հետազոտման և զարգացման տեսություններ (Ա.Վ.Ավագյան, 2001, Ժ.Հ.Պայլոզյան, 2005, О.Е.Грибова, 2005, Գ.Ռ.Հովյան, 2007, Ս.Գ.Կարապետյան, 2008, William O. Haynes; Rebekah H., 2012)

Այս խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները**.

• ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, տեսական վերլուծություն և ընդհանրացում

• հանրակրթական դպրոցներում կիրառվող լոգոպեդական փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն

• մանկավարժական և սոցիոլոգիական հետազոտման մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում, անկետավորում

• աշակերտների բանավոր և գրավոր խոսքի հետազոտման մեթոդներ

• համեմատական վերլուծության մեթոդ

• փորձարարական ուսուցում

• մաթեմատիկական վիճակագրության մեթոդ:

Գիտական նորույթը՝

• գիտականորեն վերլուծվել է լոգոպեդական աշխատանքի դրվածքը Հայաստանի հանրակրթական դպրոցներում

• բացահայտվել են հանրակրթական դպրոցի լոգոպեդական աշխատանքում առկա խնդիրները (կազմակերպչական աշխատանքները չեն իրականացվում գիտատեսական մոտեցումների համաձայն, թերի է լոգոպեդների իրազեկությունն աշխատանքի բովանդակային (մասնավորապես աշակերտների լոգոպեդական հետազոտման) և կազմակերպչական հարցերի վերաբերյալ, գոյություն չունի փորձարարականորեն արդյունավետ լոգոպեդական փաստաթղթերի համընդհանուր փաթեթ, քիչ են հայերեն լեզվով լոգոպեդական դիդակտիկ նյութերը և այլն)

• մշակվել է հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալ մոդել և աշխատանքի օպտիմալացման ուղիներ

• մշակվել է հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ, որը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով պլանավորել, իրականացնել, հաշվառել և վերահսկել աշխատանքները

• մշակվել է դպրոցում իրականացվող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկություններին (աշակերտների մեծ թիվ և հետազոտմանը հատկացվող կարճ ժամանակ) համապատասխանող լոգոպեդական հետազոտման մեթոդական համակարգ, որը ներառում է նաև աշակերտների

խոսքի համակողմանի հետազոտման առաջադրանքների փաթեթ՝ հայերեն լեզվով:

Հետազոտության տեսական նշանակությունը: Տեսականորեն հիմնավորված են հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի կատարելագործման համար առաջարկվող մոտեցումները, ինչպես նաև տրված է ստացված արդյունքների տեսական հիմնավորում: Այդ արդյունքները, ինչպես նաև մեր կողմից ներկայացված մեթոդական մշակումները, նոր տեսական տվյալներով կլրացնեն ընդհանուր և հատուկ մանկավարժությունը, այդ թվում լոգոպեդիան, ինչը նույնպես վկայում է այս հետազոտության տեսական նշանակության մասին:

Հետազոտության գործնական նշանակությունը: Վերլուծվել է Հայաստանի հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի արդի վիճակը, բացահայտվել են առկա խնդիրները և դրանց պատճառները: Մշակվել և ներդրվել է հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալ մոդել: Ներկայացվել են դրա իրագործման հիմնական ուղիները: Մշակվել է նաև հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի համընդհանուր փաստաթղթերի փաթեթ, հայերեն լեզվով լոգոպեդական դիդակտիկ նյութեր, ինչպես նաև կազմակերպչական և բովանդակային աշխատանքների վերաբերյալ մեթոդական մոտեցումներ: Փորձարարությամբ ապացուցվել է լոգոպեդական աշխատանքի կատարելագործման համար մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների, միջոցների, փաստաթղթերի և դիդակտիկ նյութերի արդյունավետությունը:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Լոգոպեդական աշխատանքը Հայաստանի հանրակրթական դպրոցներում ունի մի շարք խնդիրներ, որոնք բացասականորեն են ազդում աշխատանքի արդյունավետության վրա (փորձարարականորեն մշակված չէ հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի պլանավորման, իրականացման, հաշվետվության համընդհանուր օրինակելի փաստաթղթերի փաթեթ, քիչ են հայերեն լեզվով լոգոպեդական դիդակտիկ նյութերը և այլն):
2. Մշակվել են հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքների օպտիմալացման հիմնական ուղիները:
3. Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքների օպտիմալացման համար մեր կողմից մշակված ուղիների իրականացումը նպաստում է այդ աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտությունն իրականացվել է **3 փոխկապակցված փուլերով:**

Առաջին՝ որոնողական փուլի ընթացքում (2003-2004թթ.) կատարվել է հիմնախնդրի ընդհանուր գծերով ուսումնասիրություն, ճշտվել է հետազոտության օբյեկտը, առարկան և վարկածը: Այս ամենի հիման վրա որոշվել է հետազոտության նպատակը, խնդիրները, ընտրվել են մեթոդները, մշակվել են պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Երկրորդ՝ փորձարարական փուլի ընթացքում (2005-2012թթ.) կատարվել է հիմնախնդրի տեսական և գործնական հետազոտություն, անց են կացվել 2 փորձարարական ուսումնասիրություններ՝ հանրակրթական դպրոցում

լոգոպեդական աշխատանքների օպտիմալացման համար՝ մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների և միջոցների փորձարարական արդյունավետության գնահատման նպատակով: Հետազոտությանը մասնակցել են 117 դպրոցներում աշխատող լոգոպեդներ, լոգոպեդիայի բաժնի բարձր կուրսերում սովորող 93 ուսանողներ և տարրական դասարաններում սովորող 100 աշակերտներ:

Հետազոտության **երրորդ**՝ եզրափակիչ փուլում (2012-1013թթ.) կատարվել է փորձարարական ուսումնասիրությունների արդյունքների վերլուծություն, տվյալների մաթեմատիկական մշակում և վիճակագրական վերլուծություն, ատենախոսության տեքստի ձևակերպում, ինչպես նաև կայացել է ատենախոսության նախնական պաշտպանությունը: Այս փուլում է իրականացվել նաև ստացված արդյունքների ներդրումը գործնական աշխատանքում:

Արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված է հետազոտության անցկացման ծավալով, հետազոտվողների բավարար քանակով, ժամանակակից և դրված խնդիրներին համապատասխանող հետազոտական մեթոդների կիրառմամբ և փաստացի նյութի մանրամասն ու ճշգրիտ մաթեմատիկական մշակմամբ: Արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովում է նաև դրանց ներդրումը լոգոպեդական գործնական աշխատանքում: Տեսական ու գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված է նաև 2002–2011թթ. հրատարակված աշխատություններով:

Աշխատանքի արդյունքների փորձարկումը: Հետազոտության հիմնական դրույթները և եզրակացությունները զեկուցվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի դեֆեկտոլոգիայի (2001–2011թթ.), լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի (2011-2013թթ.) ամբիոնների նիստերում, Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանի (2002–2013թթ.), Էջմիածնի Վ.Ռշտունու անվան թիվ 11 հիմնական և Երևանի Լ.Միրիջանյանի անվան թիվ 155 դպրոցների մանկավարժական խորհուրդներում (2009-2012թթ.), ինչպես նաև ներկայացվել են հեղինակի կողմից հրատարակված 6 աշխատություններում:

Ատենախոսության նախնական պաշտպանությունը կայացել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի և հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնների 02. 07. 2013թ. համատեղ նիստում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսական աշխատանքը կազմված է 192 համակարգչային տեքստի էջից, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը կազմված է 4 աղյուսակներից, 21 նկարներից և 4 հավելվածից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են՝ նպատակը, օբյեկտը, առարկան,

խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Հիմնախնդրի դրվածքը: Հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպումը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

«Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի կազմակերպչական հարցերի վերլուծությունն ըստ գիտատեսական տվյալների» խորագրով առաջին ենթագլխում անդրադարձ է արվել հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի հիմնադրման գործընթացի պատմական զարգացմանը, սահմանվել է դպրոցում լոգոպեդական աշխատանքի նպատակը, խնդիրները և աշխատանքի հիմնական ուղղությունները: Վերլուծվել են աշխատանքի կազմակերպման ձևերը, ինչպես նաև անհատական և խմբային պարապմունքներին ներկայացվող պահանջները: Այս ենթագլխում է տեղ գտել նաև լոգոպեդական աշխատասենյակի կահավորման վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումների վերլուծությունը: Ներկայացված է նաև լոգոպեդ-ուսուցիչ, լոգոպեդ-ծնող համագործակցության կարևորությունը աշխատանքի արդյունավետության ապահովման գործում:

«Դպրոցում իրականացվող լոգոպեդական հետազոտման, փաստաթղթերի և խոսքի խանգարումների շտկման վերաբերյալ մոտեցումների վերլուծությունը» խորագրով երկրորդ ենթագլխում շարադրված է դպրոցում իրականացվող լոգոպեդական հետազոտման վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումների վերլուծությունը: Շարադրված է նաև փաստաթղթային աշխատանքը: Կատարվել է տարբեր հեղինակների կողմից առաջարկված լոգոպեդական փաստաթղթերի համեմատական վերլուծություն: Հիմնավորվել է փաստաթղթային աշխատանքի կարևորությունը լոգոպեդական աշխատանքի պլանավորման, կատարման և հաշվետվության գործընթացում: Երկրորդ ենթագլխում է ներկայացված նաև դպրոցում՝ խոսքի խանգարումների շտկման աշխատանքի բովանդակության վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումները:

«Հետազոտության տեսանկյան հիմնավորումը, խնդիրները և կազմակերպումը» խորագրով երրորդ ենթագլխում հիմնավորված է հետազոտության տեսանկյունը, այն է՝ ուսումնասիրվող հիմնախնդիրն արդիական է, սակայն ոչ լիարժեք ուսումնասիրված մեր երկրում, հիմնախնդրի քիչ ուսումնասիրված լինելը խոչընդոտ է հանդիսանում աշխատանքի կատարելագործման համար և, վերջապես, հիմնախնդրի ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի մշակել դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիներ: Նկարագրված են նաև հետազոտության իրականացման երեք փուլերը:

Ատենախոսության՝ **«Հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի դրվածքի ուսումնասիրությունը»** խորագիրը կրող երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից և գլխի ամփոփումից:

«Հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի կազմակերպչական հարցերի վերլուծությունը» խորագրով առաջին ենթագլխում շարադրված է հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի կազմակերպչական հարցերի ուսումնասիրության վերլուծությունը: Իրականացվել է Երևանի, Արարատի, Էջմիածնի և Չարենցավանի 117 դպրոցներում աշխատող լոգոպեդների անկետավորում՝ մեր կողմից մշակված հարցաթերթիկի հիման վրա: Ուսումնասիրվել է նաև ՀՊՄՀ-ի լոգոպեդիայի բաժնի բարձր կուրսերի 93 ուսանողների իրազեկությունը հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի կազմակերպչական և բովանդակային հարցերի վերաբերյալ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ լոգոպեդական աշխատանքի կազմակերպչական հարցերում առկա են մի շարք խնդիրներ: Այսպես, հարցմանը մասնակցած լոգոպեդների միայն 62.4%-ն (73) է իր աշխատանքում առաջնորդվում լոգոպեդական պարապմունքների հաճախականության, տևողության, խմբերի կազմման սկզբունքների վերաբերյալ գիտամեթոդական գրականության պահանջներով, իսկ հարցմանը մասնակցած ուսանողների միայն 66.7 %-ն (62) է իրազեկ այս հարցերին: Լոգոպեդների 46%-ը (54) հստակ չի պատկերացնում իր աշխատանքային պարտականություններն ու իրավունքները: Հարցմանը մասնակցած գրեթե բոլոր ուսանողները դպրոցում աշխատող լոգոպեդի աշխատանքային իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տվել են անորոշ պատասխաններ: Լոգոպեդների միայն 24%-ն (28) է կատարում խոսքի համակողմանի հետազոտություն: Մնացած 76%-ը (89) նշել է, որ ոչ միշտ է ճիշտ կողմնորոշվում հետազոտման փուլերի հաջորդականության մեջ, բացի այդ, չկա կրտսեր դպրոցականների խոսքի հետազոտման հայերեն լեզվով առաջադրանքների համընդհանուր տարբերակ, որը դժվարացնում է հետազոտման գործընթացը: Համանման արդյունքներ են արձանագրվել նաև կազմակերպչական այլ հարցերի վերաբերյալ:

«Հանրակրթական դպրոցներում կիրառվող լոգոպեդական փաստաթղթերի վերլուծությունը» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է հարցմանը մասնակցած լոգոպեդների փաստաթղթային աշխատանքի վերլուծությունը: Ստացված տվյալները փաստում են, որ այս աշխատանքը թերի է իրականացվում: Դպրոցներում կիրառվող փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեև լոգոպեդների 96%-ը (112) կիրառում է որոշ փաստաթղթեր, սակայն դրանք հնարավորություն չեն տալիս լիարժեք պլանավորել և իրականացնել աշխատանքները: Հարցումները ցույց տվեցին, որ մեծ մասամբ փաստաթղթերը մշակել են իրենք կամ վերցրել են այլ լոգոպեդներից, ինչպես նաև գրականությունից, այսինքն գոյություն չունի օրինակելի՝ մանկավարժորեն փորձարկված փաստաթղթերի փաթեթ՝ բոլոր դպրոցների համար: Միևնույն ժամանակ, գրեթե բոլոր լոգոպեդները (95.7%-ը) նշել են փաստաթղթերի համընդհանուր օրինակելի փաթեթի անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա աշխատանքն իրականացնել միատեսակ արդյունավետ մոտեցումների համաձայն:

«Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի բովանդակության վերլուծությունը» խորագրով երրորդ ենթագլխում շարադրված է հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի պայմանների, վերահսկման գործընթացի, մեթոդական աջակցության վերաբերյալ մեր ուսումնասիրությունների վերլուծությունը: Այսպես, նախ բացահայտվեց, որ ոչ բոլոր դպրոցներում է իրականացվում լոգոպեդական աշխատանք. 150 դպրոցներից միայն 117-ում (78%) էր աշխատում լոգոպեդ: Բացի այդ, դպրոցների մեծ մասում չկան լոգոպեդական աշխատանքի համար անհրաժեշտ տարրական պայմաններ. 30.8%-ում չկան լոգոպեդական աշխատասենյակներ: Մնացած 69.2%-ում, թեև կան, սակայն դրանց մեծ մասը չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Քիչ են հայերեն լեզվով դիդակտիկ նյութերը, խաղերը, ձեռնարկները: Եզակի են լոգոպեդների համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացները: Թերի է իրականացվում համագործակցային աշխատանքը, ինչպես նաև աշխատանքի մասնագիտական վերահսկումը: Աշխատանքի բովանդակային կողմի խնդիրներից առանձնակի կարևոր է նշել այն, որ շատ լոգոպեդներ սահմանափակվում են հիմնականում հնչարտաբերման խնդիրների շտկման աշխատանքով՝ չանդրադառնալով այլ խանգարումների, որոնք սովորողների համար ուսումնական մեծ դժվարությունների պատճառ են դառնում՝ այդպիսով նվազեցնելով դպրոցի ողջ ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ վերոնշյալ խնդիրները փոխկապակցված են և փոխպայմանավորում են մեկը մյուսին: Խնդիրների այս բազմազանությունը վկայում է այն մասին, որ լոգոպեդական աշխատանքը հանրակրթական դպրոցներում բարեփոխումների կարիք ունի:

Ատենախոսության՝ **«Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման հիմնական ուղիները»** խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից և գլխի ամփոփումից:

«Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման տեսական մոտեցումները» խորագրով առաջին ենթագլխում շարադրված են հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման տեսական մոտեցումները: Հիմնվելով գիտատեսական տվյալների և սեփական աշխատանքային փորձի վրա՝ հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքը մեր կողմից դիտարկվել է որպես մի ամբողջական մոդել, որը պետք է ունենա հետևյալ հիմնական տարրերը.

1. աշխատանքի կազմակերպման հստակ մոտեցումներ
2. համապատասխան աշխատանքային պայմաններ
3. համապատասխան պատրաստվածություն ունեցող լոգոպեդներ
4. աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթեր
5. արդյունավետ համագործակցություն լոգոպեդական աշխատանքին առնչվող այլ մասնագետների և աշակերտների ծնողների հետ
6. կարգապահական և մասնագիտական վերահսկում:

Նշենք, որ մոդելի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է դրա ամբողջականությունից:

Վերլուծելով առաջարկվող մոդելի յուրաքանչյուր տարրի վերաբերյալ բացահայտված խնդիրները, մշակելով այդ խնդիրների լուծման ճանապարհներ և ամփոփելով դրանք՝ մենք հանգեցինք այն եզրակացության, որ հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման աշխատանքն անհրաժեշտ է կատարել հետևյալ 4 հիմնական ուղիներով.

1. մեթոդական աջակցության և աշխատանքի մասնագիտական վերահսկման ապահովում

2. հայերեն լեզվով մեթոդական և դիդակտիկ նյութերի մշակում, աշխատանքային պայմանների բարելավում

3. փաստաթղթերի համընդհանուր փաթեթի մշակում

4. դպրոցում աշխատող այլ մասնագետների և աշակերտների ծնողների հետ համագործակցության բարելավում:

Տեսականորեն հիմնավորված է վերոնշյալ ուղիների իրականացման միջոցով դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման հնարավորությունը:

«Հայերեն լեզվով մեթոդական և դիդակտիկ նյութերի մշակումը՝ որպես հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղի» խորագրով երկրորդ ենթագլուխում ներկայացված է մեր կողմից մշակված լոգոպեդական հետազոտման մեթոդիկան, որը հնարավորություն է տալիս հստակ կողմնորոշվել հետազոտության քայլերի ճիշտ հաջորդականության մեջ, լիարժեք հետազոտել բոլոր աշակերտների խոսքը, զգալիորեն կրճատել հետազոտմանը հատկացվող ժամանակը և այդ գործընթացում ընդգրկել ուսուցիչներին:

Վերլուծված է նաև հետազոտման քայլերին համապատասխան՝ մեր կողմից մշակված հայերեն լեզվով առաջադրանքների փաթեթը, որը հնարավորություն է տալիս համակողմանիորեն հետազոտել 6-6.5 տարեկան երեխաների խոսքը:

Շարադրված են ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքի հետազոտման վերաբերյալ մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումները, որոնց շնորհիվ հնարավոր է վաղ հայտնաբերել գրավոր խոսքի խանգարում ունեցող աշակերտներին (սկսած՝ նախաայբբենական շրջանից) և նվազեցնել ոչ միայն հետազոտման ժամանակը, այլև հանձնարարությունների քանակը:

Այս ենթագլխում ներկայացված են նաև խոսքի ամենատարածված խանգարումների՝ հնչարտաբերման և գրավոր խոսքի խանգարումների շտկման վերաբերյալ մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումները և խաղերն ու խաղային առաջադրանքները: Հնչարտաբերման խանգարումների շտկման վերաբերյալ շարադրված մոտեցումները վերաբերվում են հնչյունների դրման, իսկ խաղերը՝ ամրապնդման փուլերին: Վերլուծվել են հայերեն հնչյունների դրման փուլի արդյունավետ իրականացման համար առաջարկվող հաջորդականության և զուգահեռության սկզբունքները՝ ոչ միայն երկշարք այլև եռաշարք բաղաձայնների դեպքում:

Գրավոր խոսքի խանգարումների վերաբերյալ մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումները վերաբերվում են հետազոտման ժամկետներին և մեթոդիկային, որոնք հնարավորություն են տալիս **վաղ հայտնաբերել** այս խնդրով սաներին, ինչպես նաև նրանց գրավոր աշխատանքների **գնահատման գործընթացին**, այն է՝ **գրավոր խոսքի խանգարում ունեցող աշակերտների գրավոր աշխատանքները գնահատելիս՝ անհրաժեշտ է հաշվի չառնել յուրահատուկ բնույթի սխալները, որոնք պայմանավորված են այս խնդրով: Դրա նպատակն է՝ կանխել երեխայի ցածր ինքնագնահատականի, սեփական ուժերի հանդեպ անվստահության, ուսման հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորումը, որոնք առաջանում են այս երեխաների մեջ՝ մշտապես ցածր գնահատականներ ստանալու հետևանքով:**

Այս ենթագլխում են ներկայացված նաև լոգոպեդական աշխատանքի համար առաջարկվող հեղինակային խաղերն ու խաղային առաջադրանքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գրավոր խոսքի խանգարումների շտկման համար անհրաժեշտ հայերեն լեզվով նյութերը եզակի են՝ մեր կողմից մշակվել են հայերեն հնչյուն-տառերի վերաբերյալ լոգոպեդական խաղեր և խաղային առաջադրանքներ, որոնք հնարավորություն են տալիս արդյունավետ կերպով իրականացնել շտկողական աշխատանքները, քանի որ բարձրացնում են սաների ակտիվությունը և հուզական ներգրավվածությունն աշխատանքի մեջ:

«Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման համար առաջարկվող փաստաթղթերի բովանդակությունը» խորագրով երրորդ ենթագլխում հիմնավորվել է լոգոպեդական փաստաթղթերի կարևորությունը, ներկայացվել են այն խնդիրները, որոնք մենք ձգտել ենք լուծել փաստաթղթերը մշակելիս՝ ստեղծել հանրակրթական դպրոցի լոգոպեդական աշխատանքի առանձնահատկություններին համապատասխանող փաստաթղթեր, նվազեցնել փաստաթղթերի լրացման աշխատաժամանակը:

Մշակված փաստաթղթերը պայմանականորեն բաժանվել են 2 խմբի՝ լրացման ենթակա և պատրաստի բովանդակությամբ փաստաթղթեր: Առաջիններում նախատեսված են հակիրճ գրառումներ լոգոպեդի կողմից ողջ ուսումնական տարվա ընթացքում, իսկ երկրորդները լրացման ենթակա չեն: Դրանք սահմանում են լոգոպեդի աշխատանքի մեթոդաբանական հիմքերը (գծապատկեր 1.):

«Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման համար մեր կողմից առաջարկվող մոտեցումների արդյունավետության փորձարարական հիմնավորումը» խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված են մեր կողմից 2006-2012թթ ընթացքում իրականացված 2 փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները: **Առաջին փորձարարական ուսումնասիրությունն** իրականացվել է 2006-2009թթ. Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանում: Մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների, միջոցների արդյունավետության գնահատման նպատակով վերոնշյալ 3 ուսումնական տարիների ընթացքում դրանք կիրառվել են ճեմարանի լոգոպեդական աշխատանքում, որից հետո ստացված տվյալները համեմատվել



Գծապատկեր 1. Մեր կողմից առաջարկվող փաստաթղթերի փաթեթը

են 2003-2006թթ. ընթացքում մեր կողմից՝ ավանդական մոտեցումների համաձայն իրականացված աշխատանքի տվյալների հետ: 2003-2006 ուսումնական տարիների ընթացքում լոգոպեդական պարապմունքների մեջ ընդգրկված 50 աշակերտներ դիտարկվել են որպես ստուգողական խումբ, իսկ փորձարարական խումբն ընտրվել է 2006-2009 ժամանակահատվածում պարապող 50 աշակերտներից: Խմբերը կազմվել են աշակերտների սկզբնական (մինչ աշխատանքի սկիզբը) տվյալների հիման վրա՝ պահպանելով խոսքի խանգարման տեսակի, դրա արտահայտման աստիճանի, աշակերտների տարիքի և սեռի համաչափությունը: Աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշ է ընտրվել լոգոպեդական աշխատանքի տևողությունը, քանի որ աշխատանքի բարձր արդյունավետությունը հանգեցնում է դրա տևողության նվազմանը:

Առաջին փորձարարական ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ փորձարարական խմբում ընդգրկված աշակերտների հետ իրականացված աշխատանքը ստուգողական խմբի համեմատ կարճատև է եղել (աղյուսակ1):

Այսպես, եթե փորձարարական խմբում ընդգրկված հնչյունային թերզարգացում ունեցող աշակերտների հետ աշխատանքի *առավելագույն տևողությունը* կազմել էր 7-8 ամիս, ապա ստուգողական խմբի աշակերտների հետ՝ 9-11 ամիս, փորձարարական խմբում *նվազագույն տևողությունը* կազմել էր 2 ամիս, մինչդեռ ստուգողական խմբում՝ 3 ամիս: Եվ, վերջապես, փորձարարական խմբում աշխատանքի *միջին տևողությունը* կազմել էր 4 ամիս, իսկ ստուգողական խմբում՝ 5-7 ամիս: Բացի այդ, փորձարարական

Աղյուսակ 1
Աշխատանքի նվազագույն, միջին և առավելագույն տևողությունը
փորձարարական և ստուգողական խմբերում

Աշխատանքի տևողությունը / **Խոսքի խանգարման տեսակը**	Աշխատանքի նվազագույն տևողությունը		Աշխատանքի միջին տևողությունը		Աշխատանքի առավելագույն տևողությունը	
	փորձ. խումբ	ստուգ. խումբ	փորձ. խումբ	ստուգ. խումբ	փորձ. խումբ	ստուգ. խումբ
Հնչյունային թերզարգացում	2 ամիս	3 ամիս	4 ամիս	6 ամիս	8 ամիս	11 ամիս
Հնչյունահնչութային թերզարգացում, գրավոր խոսքի խանգարում	7 ամիս	11 ամիս	11 ամիս	14 ամիս	14 ամիս	16 ամիս
Խոսքի ընդհանուր թերզարգացում, 4-րդ աստիճան, գրավոր խոսքի խանգարում	16 ամիս	16 ամիս	19 ամիս	22 ամիս	22 ամիս	26 ամիս

խմբում համեմատաբար երկարատև աշխատանք իրականացվել էր աշակերտների ընդամենը 10%-ի դեպքում, իսկ ստուգողական խմբում՝ 25%-ի դեպքում: Եվ, ընդհակառակը, աշխատանքը կարճատև էր եղել փորձարարական խմբի աշակերտների 40%-ի դեպքում, իսկ ստուգողական խմբի՝ ընդամենը 20%-ի դեպքում: Այսպիսով, մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների, միջոցների, մանակավարժական պայմանների կիրառումը նպաստել է փորձարարական խմբի աշակերտների հետ իրականացված աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ կրճատելով դրա տևողությունը: Բացի այդ, փորձարարական խմբում ստուգողական խմբի համեմատ կրկնակի ավել է եղել այն աշակերտների թիվը, ում հետ աշխատանքն ավարտվել է կարճ ժամկետում և ընդհակառակը, 15%-ով պակաս է եղել այն աշակերտների թիվը, ում հետ համեմատաբար երկարատև աշխատանք է պահանջվել: Համանման տվյալներ ստացվել էին նաև խոսքի մյուս խանգարումների (հնչյունահնչութային թերզարգացում, գրավոր խոսքի խանգարում և խոսքի ընդհանուր թերզարգացում 4-րդ աստիճան, գրավոր խոսքի խանգարում) վերաբերյալ: Բացի այդ, արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ բարելավվել է նաև լոգոպեդ-ուսուցիչ, լոգոպեդ-ծնող համագործակցային աշխատանքները: Այսպես, փորձարարական տարիների ընթացքում ստուգողական տարիների համեմատությամբ 2 անգամ ավելացել էր ուսուցիչների կողմից աշակերտներին

լոգոպեդական հետազոտման ներկայացնելու հայտերի թիվը. 2003-2006թթ. ընթացքում լոգոպեդական հետազոտման էին ուղղորդվել 14, իսկ 2006-2009թթ.՝ 29 աշակերտներ: Լոգոպեդական աշխատանքից հրաժարվող ծնողների թիվը. փորձարարական տարիների ընթացքում նվազել էր 3.5 անգամ. ստուգողական տարիներին լոգոպեդական աշխատանքից հրաժարվել է 21, իսկ փորձարարական տարիներին՝ ընդամենը 6 ծնող: Սա վկայում է այն մասին, որ մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների, միջոցների կիրառումը բարձրացրել է լոգոպեդական աշխատանքի արդյունավետությունը և նպաստել ուսուցիչների ու ծնողների մեջ՝ այդ աշխատանքը կարևորող վերաբերմունքի ձևավորմանը:

2009-2012թթ. մեր կողմից անց է կացվել 2-րդ փորձարարական ուսումնասիրությունը, որի նպատակն էր՝ սեփական աշխատանքի հիման վրա իրականացված փորձարարական ուսումնասիրության արդյունքները համալրել այլ դպրոցներում աշխատող լոգոպեդների տվյալներով: Երկրորդ փորձարարական ուսումնասիրությունը նույնպես տևել է 3 տարի: Դրան մասնակցել են 21 դպրոցներում աշխատող փորձառու լոգոպեդներ: Նշենք, որ 2009-2012 փորձարարական տարիների ընթացքում փորձարկվող դպրոցներում նախորդ տարիների համեմատ չի փոխվել կրթական ծրագիրը, լոգոպեդների աշխատանքի դրույքաչափը: Գրեթե նույնն է եղել նաև տարրական դասարաններում սովորող աշակերտների ընդհանուր թիվը և լոգոպեդի աշխատանքային ծանրաբեռնվածությունը: 2009-2011 ուսումնական տարիների ընթացքում ստուգվել է լոգոպեդական հետազոտման առաջարկվող մեթոդիկայի և խոսքի ամենատարածված խանգարումների՝ հնչարտաբերման և գրավոր խոսքի խանգարումների շտկման համար առաջարկվող խաղերի արդյունավետությունը:

Լոգոպեդական հետազոտման մեր կողմից մշակված սխեման գնահատվել է ըստ հետևյալ չափանիշների. **ստեղծման անհրաժեշտությունը, դպրոցում կիրառելիությունը, սխալվելու դեպքերը, ժամանակի ռացիոնալությունը** և **համընդհանուր կիրառումը:**

Արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ փորձարարական ուսումնասիրությանը մասնակցած լոգոպեդների 95,2%-ը (20) անհարժեշտ է համարել մեթոդիկայի ստեղծումը, 85,7%-ը (18) նշել է, որ մեթոդիկան կիրառելի է դպրոցի պայմաններում, 95,2%-ը (20)՝ չի ունեցել աշակերտների խոսքի հետազոտման մեջ սխալվելու ոչ մի դեպք, 80,9%-ը (17) ռացիոնալ է համարել լոգոպեդական հետազոտմանը հատկացվող ժամանակը և, վերջապես, 76,2%-ը (16) նշել է, որ այս մեթոդիկան արդյունավետ է և կարելի է ներկայացնել համընդհանուր կիրառման:

Հնչարտաբերման և գրավոր խոսքի խանգարումների շտկման համար առաջարկվող խաղերը գնահատվել են ըստ հետևյալ չափանիշների՝ ա)ծառայու՞մ են արդյոք խաղերն իրենց առջև դրված նպատակին, բ)հետաքրքիր և գրավի՞չ են արդյոք երեխաների համար, գ)նպաստու՞մ են արդյոք խաղերը լոգոպեդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Լոգոպեդների

95.2%-ը (20), նշել է, որ *հնչարտաբերման խանգարումների շտկման համար առաջարկված խաղերը* ծառայում են իրենց առջև դրված նպատակի իրագործմանը, բոլոր լոգոպեդները նշել են, որ խաղերը հետաքրքիր և գրավիչ են երեխաների համար և, վերջապես, լոգոպեդների 90.5%-ի (19) կարծիքով խաղերը նպաստում են աշխատանքի արդյունավետության բարձրացմանը (տրամագիր 1):



Տրամագիր 1. Երկրորդ փորձարարական ուսումնասիրության տվյալները՝ հնչարտաբերման և գրավոր խոսքի խանգարումների շտկման խաղերի վերաբերյալ

Գրավոր խոսքի խանգարումների շտկման համար առաջարկված խաղերն իրենց առջև դրված նպատակին ծառայում են լոգոպեդների 90.5%-ի (19), հետաքրքիր և գրավիչ են՝ 100%-ի (21) և նպաստում են աշխատանքի արդյունավետության բարձրացմանը՝ 85.7%-ի (18) կարծիքով (Տրամագիր 1):

2011-2012 ուսումնական տարվա ընթացքում ստուգվել է մեր կողմից մշակված լոգոպեդական փաստաթղթերի արդյունավետությունը՝ ըստ հետևյալ չափանիշների՝ **աշխատանքի պլանավորում**, **աշխատանքի իրականացում** (լոգոպեդական հետազոտություն, պարապմունքներ), կատարված աշխատանքի վերաբերյալ **հաշվետվություն**, այլ մասնագետների և աշակերտների ծնողների հետ **համագործակցություն, ժամանակի ռացիոնալություն** և **համընդհանուր կիրառման նպատակահարմարություն**: Գնահատումը կատարվել է՝ փորձարարական տարվա արդյունքները համեմատելով նախորդ տարիների արդյունքների հետ: Փորձարարության արդյունքում ստացվել են հետևյալ տվյալները (տրամագիր 2):



Տրամագիր 2. Երկրորդ փորձարարական ուսումնասիրության տվյալները՝ մեր կողմից մշակված լոգոպեդական փաստաթղթերի վերաբերյալ

Ինչպես երևում է տրամագիր 2-ից՝ լոգոպեդների 71.4%-ը (15) նշել է, որ առաջարկված լոգոպեդական փաստաթղթերը բարելավել են աշխատանքի պլանավորման գործընթացը, 85.7%-ի (18) կարծիքով փաստաթղթերը նպաստել են աշխատանքի արդյունավետ իրականացմանը, 66.7%-ը (14) գտնում է, որ այս փաստաթղթերը հեշտացնում և ավելի ռացիոնալ են դարձնում հաշվետվության գործընթացը, իսկ 61.9%-ի (13) կարծիքով փաստաթղթերը նպաստում են ուսուցիչների և աշակերտների ծնողների հետ համագործակցության բարելավմանը: Փաստաթղթերի վարմանը հատկացվող ժամանակը ռացիոնալ է համարել լոգոպեդների 61.9%-ը (13): Նույնքան լոգոպեդներ նշել են, որ մեր կողմից մշակված լոգոպեդական փաստաթղթերը կարելի է կիրառել՝ որպես փաստաթղթերի համընդհանուր օրինակելի փաթեթ:

Այսպիսով, ինչպես ցույց տվեցին 2 փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները՝ մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների, միջոցների՝ լոգոպեդական հետազոտման մեթոդիկայի, խոսքի ամենատարածված խանգարումների շտկման համար առաջարկվող հայերեն լեզվով խաղերի ու խաղային առաջադրանքների, ինչպես նաև լոգոպեդական փաստաթղթերի օրինակելի փաթեթի կիրառումը նպաստում է լոգոպեդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Ասվածից հետևում է, որ հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման համար առաջարկվող հիմնական ուղիների իրականացումը նկատելիորեն կբարելավի այդ աշխատանքը Հայաստանի դպրոցներում:

Եզրակացություն

Մեր կողմից անցկացված հետազոտությունը հնարավորություն տվեց կատարել հետևյալ հետևությունները.

1. Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքների բարելավումը արդիական հիմնախնդիր է: Չնայած այն հանգամանքին, որ հայ հեղինակներից շատերն իրենց գիտական աշխատանքները նվիրել են խոսքի տարբեր խանգարումների հաղթահարման նորանոր մոտեցումների մշակմանը, սակայն Հայաստանի հանրակրթական դպրոցներում լոգոպեդական աշխատանքի դրվածքը տեսականորեն և փորձարարականորեն քիչ է ուսումնասիրված: Այս աշխատանքում առկա են կազմակերպչական և բովանդակային բազմաթիվ խնդիրներ, որոնք նվազեցնում են դրա արդյունավետությունը: Մասնավորապես, փորձարարականորեն մշակված չէ դպրոցում լոգոպեդական աշխատանքի պլանավորման, հաշվառման, հաշվետվության և վերահսկման համընդհանուր օրինակելի փաստաթղթերի փաթեթ, քիչ են հայերեն լեզվով դիդակտիկ նյութերը՝ աշխատանքի արդյունավետ կազմակերպման և անցկացման համար, լոգոպեդական պարապմունքների բովանդակությունը նշանակալի կատարելագործման կարիք ունի և այլն: Այս առումով էլ՝ վերոնշյալ խնդիրների լուծումը հանդիսանում է արդիական, տեսականորեն և գործնականորեն կարևոր:

2. Հաստատված է, որ հանրակրթական դպրոցների լոգոպեդական աշխատանքի կազմակերպչական հարցերում առկա են մի շարք խնդիրներ: Նախ, ոչ բոլոր դպրոցներում են աշխատում լոգոպեդներ՝ ուսումնասիրված 150 դպրոցներից՝ միայն 117-ում (78%), որոնց 30.8%-ում (36) չկան լոգոպեդական աշխատանքի նույնիսկ տարրական պայմաններ: Լոգոպեդների 37.6%-ը (44) իր աշխատանքում չի առաջնորդվում լոգոպեդական պարապմունքների հաճախականության, տևողության, խմբերի կազմման սկզբունքների վերաբերյալ գիտատեսական պահանջներով, 54%-ն (63) է միայն հստակ պատկերացնում իր աշխատանքային պարտականություններն ու իրավունքները, 76%-ը (89) չի կատարում խոսքի համակողմանի հետազոտություն: Հարցվածների 96%-ը աշխատանքում թեև կիրառում է լոգոպեդական փաստաթղթեր, սակայն դրանք չունեն փորձարարական հիմնավորում: Շատ լոգոպեդներ սահմանափակվում են միայն հնչարտաբերման խնդիրների շտկման աշխատանքով՝ չանդրադառնալով խոսքի այլ՝ ուսումնական դժվարությունների պատճառ դարձող խանգարումներին:

3. Առկա խնդիրների և դրանց պատճառների վերլուծության հիման վրա մշակվել են հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման հետևյալ հիմնական ուղիները՝

- մեթոդական աջակցության և աշխատանքի մասնագիտական վերահսկման ապահովում,
- հայերեն լեզվով մեթոդական, դիդակտիկ նյութերի մշակում և աշխատանքային պայմանների բարելավում,
- փաստաթղթերի համընդհանուր փաթեթի մշակում,

- դպրոցում աշխատող այլ մասնագետների և աշակերտների ծնողների հետ համագործակցության բարելավում:

Հիմնավորվել է այս ուղիների միջոցով հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման հնարավորությունը:

4. Հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի բարելավման համար մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների, միջոցների, այդ թվում՝ փաստաթղթերի, կիրառումը նպաստում է լոգոպեդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Այդ են վկայում մեր կողմից անցկացված փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները:

5. Առաջին փորձարարական ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը փաստեց, որ շնորհիվ մեր կողմից մշակված մեթոդական մոտեցումների, միջոցների կիրառման՝ փորձարարական խմբի աշակերտների հետ իրականացված լոգոպեդական աշխատանքի տևողությունը ստուգողական խմբի համեմատությամբ՝ ավելի պակաս էր (միջինում՝ 2-3 ամսով): Բացի այդ, փորձարարական խմբում ստուգողական խմբի համեմատությամբ ավելի շատ էր այն աշակերտների թիվը, ում հետ իրականացվել էր համեմատաբար կարճատև աշխատանք (միջինում 18.7%-ով): Եվ, ընդհակառակը, միջինում 16.1 %-ով քիչ էր այն աշակերտների թիվը, ում հետ իրականացվել էր համեմատաբար երկարատև աշխատանք:

6. Երկրորդ փորձարարական ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ լոգոպեդների 76.2%-95.2%-ը (16-20) արդյունավետ է համարել լոգոպեդական հետազոտման՝ մեր կողմից առաջարկված մեթոդիկան՝ ըստ գնահատման բոլոր չափանիշների: Հնչարտաբերման խանգարումների շտկման համար առաջարկված խաղերն ըստ բոլոր չափանիշների արդյունավետ են համարել գրեթե բոլոր լոգոպեդները՝ 90.5%-100%-ը (19-21), իսկ գրավոր խոսքի խանգարումների շտկման համար առաջարկված խաղերը՝ 85.7%-100%-ը (18-21): Լոգոպեդական փաստաթղթերն, ըստ բոլոր չափանիշների արդյունավետ է գնահատել լոգոպեդների 61.9%-85.7%-ը (13-18):

7. Այսպիսով, անցկացված հետազոտության արդյունքները վկայում են, որ մեր կողմից մշակված մանկավարժական մոտեցումների, մեթոդների և միջոցների կիրառումը նպաստում է լոգոպեդական աշխատանքի օպտիմալացմանը: Ատենախոսության մեջ ներկայացված է դրանց կիրառման մեծ հնարավորությունները:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում

1. **Է. Ռ. Թադևոսյան** Աշակերտների «Լոգոպեդական հետազոտման քարտը»՝ որպես հանրակրթական դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման միջոցներից մեկը: Գիտամեթոդական հոդվածների ժողովածու «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն», Եր., 2003, էջ 4-9

2. **Է.Ռ.Թադևոսյան** Հանրակրթական դպրոցում աշխատող լոգոպեդների՝ լոգոպեդական աշխատանքի կազմակերպման հարցերին իրազեկության սոցիոլոգիական հետազոտությունը: Գիտամեթոդական հոդվածների ժողովածու «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն», Եր., 2004, էջ 74-78

3. Ժ.Հ.Պայլոզյան, **Է.Ռ.Թադևոսյան** Կրտսեր դպրոցականների հնչարտաբերման կարողության շտկման փորձից: Գիտամեթոդական հոդվածների ժողովածու «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն», Եր., 2005, էջ 80-88

4. **Է.Ռ.Թադևոսյան** «Լոգոպեդի և ծնողի համագործակցությունը՝ որպես հանրակրթական դպրոցի լոգոպեդական աշխատանքի կարևոր օղակ» Գիտամեթոդական հոդվածների ժողովածու «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն», Եր., 2006, էջ 22-27

5. Ժ.Հ.Պայլոզյան, **Է.Ռ.Թադևոսյան** Խոսքի հնչյունային թերզարգացման հաղթահարման առանձնահատկությունները: «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 4. 2011, էջ 55-59

6. **Է.Ռ.Թադևոսյան** «Հիբրիդ» տառեր: «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 5. 2011, էջ 25-28

ТАДЕВОСЯН ЭМИЛИЯ РАДИКОВНА

ОСНОВНЫЕ ПУТИ ОПТИМИЗАЦИИ ЛОГОПЕДИЧЕСКОЙ РАБОТЫ В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03 – "Специальная педагогика".

Защита диссертации состоится 18 июня 2015г. в 12^{00} на заседании специализированного совета "Педагогика" 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Известно, что нарушения речи в той или иной степени затрудняют процесс усвоения знаний и речевое общение, отрицательно влияют на общее развитие и становление личности. Преодоление нарушений речи обеспечит здоровую основу для полноценного обучения детей.

Однако, недостаточная изученность постановки логопедической работы в общеобразовательных школах республики, отсутствие экспериментально разработанных средств, методов и педагогических подходов организации этой работы, единой документации планирования, учета и контроля логопедической работы значительно затрудняют решение этой важной проблемы. Поэтому экспериментальная разработка основных путей оптимизации логопедической работы в общеобразовательной школе является весьма актуальной, теоретически и практически значимой.

Цель исследования – разработать основные пути оптимизации логопедической работы в общеобразовательной школе.

Задачи исследования:

1. изучить современные подходы совершенствования логопедической работы в общеобразовательной школе;
2. изучить постановку логопедической работы в общеобразовательных школах республики;
3. разработать средства, методы и педагогические подходы для оптимизации логопедической работы в школе и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна исследования:

- изучено и разносторонне проанализировано состояние логопедической работы в общеобразовательных школах Армении;
- разработана оптимальная модель логопедической работы в общеобразовательной школе, а также пути оптимизации этой работы;

- разработан пакет необходимой документации для успешной организации логопедической работы в общеобразовательной школе;
- разработана методика логопедического обследования и оценки речи учащихся с учетом условий и особенностей работы в школе.

Теоретическая значимость исследования заключается в теоретическом обосновании эффективности применения рекомендованных подходов и методических разработок для совершенствования логопедической работы в общеобразовательной школе, а также полученных результатов исследования.

Материалы диссертационного исследования в определенной степени дополнят специальную педагогику и логопедию новыми теоретическими сведениями.

Практическая значимость исследования определяется экспериментальным изучением состояния логопедической работы в общеобразовательных школах Армении, выявлением нерешенных задач и причин их возникновения, разработкой и внедрением в школьную практику основных путей оптимизации логопедической работы. В диссертации представлена оптимальная модель логопедической работы в общеобразовательной школе, единый пакет необходимой логопедической документации для планирования, учета и контроля проводимой работы с детьми, средства, методы, дидактический наглядный материал и педагогические условия их применения для совершенствования логопедической работы в общеобразовательной школе. Экспериментально доказана эффективность рекомендуемых подходов.

Апробация результатов исследования. Основные положения, результаты и выводы исследования докладывались и обсуждались на заседаниях кафедр дефектологии (2001-2011гг.), логопедии и восстановительной терапии (2011-2013гг.) МГПУ им. Х.Абовяна, а также на заседаниях педагогических советов Ереванского лицея им. А. Ширакаци (2002-2013гг.), основной школы N11 им. В.Рштуни г. Эчмиацин, школы N155 им. Л.Мириджаняна г. Ереван (2009-2012гг.). По теме диссертации опубликовано 6 статей.

Структура диссертации. Диссертационная работа изложена на 192 страницах компьютерного текста и состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 4 таблицы, 21 рисунок и 4 приложения.

EMILYA R. TADEVOSYAN

THE MAIN WAYS OF LOGOPEDIC WORK OPTIMIZATION IN THE SECONDARY SCHOOL

Thesis submitted for the Degree of Candidate (PhD) of Pedagogical Sciences, Specialty Area: 13.00.03 "Special pedagogy".

The official defence of the thesis will take place at Higher Attestation Commission's 020 Degree-awarding Scientific Council's session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on June 18, 2015, at 12^{00}am. (Address: 375010 Yerevan, Tigran Mets avenue, 17).

SUMMARY

The relevance of the research. It is known that speech disorders of varyous degrees impede of learning and speech communication processes, negatively affect general development and personality formation. Overcoming speech disorders provides a healthy basis for the children full education. This is why the logopedic work is an important element of the whole educational process.

However, insufficient knowledge of logopedic work in secondary schools of the country, the lack of experimentally developed means, methods and pedagogical approaches in organization of this work, deficiency of unified documentation for planning, processing and control of logopedic work really makes the solution to this important problem rather complicated. Therefore, the experimental development of the main ways to optimize logopedic work in secondary schools of utmost importance, being significant, both theoretically and practically.

The aim of the research. Develop the basic ways of logopedic work optimization in secondary schools.

The objectives of the research are as follows:

1. Explore contemporary approaches to improve logopedic work in secondary schools;
2. Explore the level of logopedic work in secondary schools;
3. Develop necessary methods, means and pedagogical approaches to optimize logopedic work in schools and proved its effectiveness experimentally.

The scientific novelty of the research:

- The condition of logopedic work in secondary schools in Armenia is explored and analysed;
- The optimal model of logopedic work in the secondary school are created, as well as the ways to optimize of this work;
- A sample package of the necessary documentation is worked out for successful organization of logopedic work in secondary schools;

• A technique of logopedic work examination and evaluation of the pupils' speech is developed taking into account the characteristics features and state of logopedic work in schools.

The theoretical significance of the research. The theoretical significance of the study are theoretical justification of effectiveness of the recommended approaches and teaching materials for logopedic work improvement in secondary schools, as well as the obtaind results of the study.

The recommended approaches for improving logopedic work in secondary schools, as well as the results are theoretically justified. This information will enrich special and general pedagogy with new theoretical data.

The practical significance of the research. Experimental study has revealed the situation of logopedic work in secondary schools in Armenia, identified gaps and their causes, developed and implemented of the main ways to optimize logopedic work in school practice.

The thesis covers optimal model of logopedic work in secondary schools, the single package of necessary logopedic documentation for planning, processing and control.

The effectiveness of the approaches, means, documentation and teaching booklets for improving the proposed logopedic work is proved experimentally. It can be included into the practice of logopedic work at schools.

The approbation of the results of the research. The main issues, results and conclusions of the research have been reported and discussed at meetings of the chair of Defectology (2001-2011), chair of Speech and rehabilitation therapy (2011-2013) and at the meetings of pedagogical boards of Lyceum after A. Shirakatsy, Yerevan (2002-2013), secondary school N11 after V.Rshtuni, Echmiadzin and school N155 after L.Mirijanyan, Yerevan (2009-2012). 6 articles have been published on the thesis topic.

The structure of the thesis. The thesis is written on 192 computer print pages. The thesis consists of the introduction, three chapters, conclusion, bibliography and appendices. The text of the thesis includes 4 tables, 21 images and 4 appendices.